Հմայակյան Դավիթ
Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, 4-րդ կուրս
էլ. փոստ՝ vta1897@yahoo.ie

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ, ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ. ՀԱՏՈՒԿ ԱՆԴՐԱԴԱՐՁ «ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԻՉԸ» ՀՈԴՎԱԾԻՆ

Եղել եմ հավատքի և էթիկայի մար
Հավատքի և պաշտամունքի տեղերում
միշտ էլ առաջին տեղերը հատկացրել եմ
Աստծուն ու Հայրենիքիս:
Գարեգին Նժդեհ

Գարեգին Նժդեհը, որը մեծ ռազմական, քաղաքական և ազգային գործիչ լինելով հանդերձ, նաև շատ մեծ մտածող է ու թողել է հարուստ ստեղծագործական ժառանգություն, մինչև այսօր էլ վերագնահատման ու ճիշտ հասկացման պահանջ է զգում: Նժդեհի ստեղծագործական ժառանգության ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունների շրջանակներում մինչև այսօր էլ պարզաբանված չէ այն հարցը, թե արդյոք Նժդեհը քրիստոնեական դավանանքի հետևորդ էր, թե՝ ո՛չ: Հաճախ այդ խնդրի ոչ ճիշտ արժեքավորման, վերլուծության հետևանքով տարբեր մասնագետներ գիտակցաբար կամ էլ անգիտակցաբար ջուր են լցնում մի շարք աղանդավորական շարժումների ջրաղացներին: Ընդհանրացնելով ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է առանձնացնել երեք տարբեր մոտեցումներ:

Առաջին մոտեցման շրջանակներում Նժդեհը ներկայացվում է որպես քրիստոնյա մտածող, իսկ ահա երկրորդ մոտեցման շրջանակներում վերջինս, ընդհակառակը, ներկայացվում է որպես ոչ քրիստոնյա, հեթանոս մտածող, որն իր «Ցեղակրոն» գաղափարախոսությամբ փորձում էր վերածնել հայոց հին հեթանոսական կրոնը: Երրորդ մոտեցման շրջանակներում Նժդեհը չի ներկայացվում որպես որոշակի դավանանքի հետևորդ: Թերևս այս մոտեցումն ամենահաջողն է, քանի որ քրիստոնեության և Քրիստոսի մասին Նժդեհի արտահայտած բազմաթիվ դրական մտքերը[1] ոչ մի հիմք չեն տալիս պնդելու, որ Նժդեհը հակաքրիստոնյա է և միևնույն ժամանակ, հաշվի առնելով հեթանոսության մասին նրա արտահայտած դարձյալ դրական մտքերը, ոչ մի հիմք չունենք պնդելու, որ նա քրիստոնյա է: Ուստի սխալված չենք լինի, եթե համաձայնենք Մ. Լալայանի հետևյալ կարծիքին. «Նժդեհը չի հակադրում Վահագնին և Քրիստոսին, կամ՝ հայկականն ու քրիստոնեականը, այլ՝ դրանք խորքում տեսնում է համադրելի»[2]:

Երկրորդ մոտեցման կողմնակիցներն իրենց վարկածը հիմնավորելու համար հիմնականում անտեսում են քրիստոնեության մասին Նժդեհի ասած դրվատանքի խոսքերը, ինչպես նաև շատ հաճախ մեկնաբանում են նրա որոշ խոսքեր համատեքստից դուրս: Նման դեպքերի ամենավառ օրինակը «Մեր հեղափոխության արարիչը»[3] (1924 թ.) հոդվածում տեղ գտած որոշ դատողություններն են, օրինակ՝

Ի՞նչը քեզ մղեց միամտորեն հավատալու ցնորապաշտ նազովրեցու վտանգավոր խոսքին... Դու խաբված ես ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնեական բարոյախոսության, որ շարունակում է մնալ որպես ներկ և շպար, որպես քող և դիմակ ուժեղների հոգու համար[4]:

Հիմնվելով այս հատվածի վրա՝ երկրորդ մոտեցման կողմնակիցներն իրենց թեզիսը հիմնավորելու համար բերում են այն փաստարկը, թե Նժդեհը Քրիստոսին իբր անվանել է ցնորապաշտ, նրա խոսքը՝

---

[1] Օրինակ՝ «Նրա (Հիսուս Քրիստոսի - Դ.Հ.) անձնական կյանքը պիտ դառնայ եկեղեցու ուղեցույց: Նրա մահաւան խորհուրդը - հերոսական զոհաբերութիւն: Նա զոհաբերեց, որովհետև գաղափարի հերոս էր: Միայն արիւն, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել» (տե՛ս **Նժդեհ Գ.**, Երկեր, Երկու հատորով, հ. 1, Երևան, 2002, էջ 69), «Քրիստոնյան նա՛ չէ ով քրիստոնեական վարդապետության տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մեջ և տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մեջ մի քիչ քրիստոնեություն կա - մի կայծ ամենահզոր աստվածամարդու հոգուց» (տե՛ս նույն տեղում, էջ 125), «Սկզբից ի վեր հայութիւնն եւ իր քրիստոնեությունը ծուլուած են ի մի բնութիւն» (տե՛ս **Նժդեհ Գ.**, Ամերիկահայությունը. ցեղը և իր տականքը, «Ազգայնական միտք», թիվ 7, Երևան, 2000, էջ 70):

Նժդեհը նաև փորձել է, ինչ-որ առումով, «հաշտության» եզրեր գտնել հեթանոսության և քրիստոնեության միջև. «Վահագնի հետ պիտի խոսենք հիմա, Աստվածը հին արիական հայության: Մի նոր գիրք պիտի դրվի մեր ժողովրդի ձեռքը - Ավետարանը Արիների» (տե՛ս **Նժդեհ Գ.**, Երկեր, էջ 124), «Հայն իր Վահագն ունէր - աստվածը քաջության: Քաջ եւ քաջապաշտ է նա: ... Քաջ են, ընդհանրապես, ոգու ժողովուրդները: Սրանցից է հայը՝ գերազանցօրէն: Հեթանոս հայու քաջութիւնը չտկարացաւ նաև քրիստոնեական Հայաստանում: Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ դա ընդունեց արտայայտութեան մի նոր ձեւ եւս – նահատակութիւն կամաւոր, որն իր խորքի մէջ ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ գիտակցական մահուամբ անմահանալու ձգտումը» (տե՛ս **Հատընտիր / Նժդեհ Գ.**, Երևան, 2001, էջ 255):

[2] **Լալայան Մ.**, Ցեղակրոն և տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Երևան, 2-րդ բարեփոխված հրատարակություն, էջ 34:

[3] Տե՛ս **Հատընտիր / Նժդեհ Գ.**, էջ 306 – 308:

[4] Այս հատվածը ներկայացված է Նժդեհի՝ «Հավատամք» խորագրով (1991, Երևան) լույս տեսած գրքի «Կյանքը» բաժնի վերջում:

վտանգավոր, իսկ քրիստոնեական բարոյախոսությունը համարել է հայ ժողովրդի դժբախտությունների հիմնական պատճառը: Կարդալով հոդվածից մեջբերված վերհիշված տողերը՝ կարելի է միանշանակ խոսել Նժդեհի հակաքրիստնյա լինելու մասին: Բայց իրականում այս հատվածը ոչ այլ բան է, եթե ոչ «Մեր հեղափոխության արարիչը» հոդվածի համապատասխան հատվածի մասնակիորեն վերափոխված տարբերակը, որը հոդվածի համատեքստից դուրս մեկնաբանվելու դեպքում այլևայլ հարցադրումների տեղիք է տալիս: Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե ներկայացվի հոդվածի այդ հատվածը: Վերջինս ունի հետևյալ տեսքը.

Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի. – օգնութիւն, փրկութիւն ինձ:

Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.

- Ծարա՞ւ ես, արբ արցունքդ...

- Կոտորու՞մ ես, ջրի չա՞փ էլ արժէք չունի արիւնդ՝ դու ես մեղաւոր, որովհետև թոյլ ես...

- Կողոպտու՞մ ես, տէր չե՞ս վաստակիդ՝ դու ես մեղաւոր, որովհետև թոյլ ես...

- Շղթաների մէ՞ջ կը ծնեն, կապրեն, կը մեռնեն զաւակներդ՝ դու ես մեղաւոր, որովհետև թոյլ ես...

- Կա՞խ է գլուխդ, խոնարհ է ճակատդ, բռնութեան լծի տակ երկտակուա՞ծ է մէջքդ, պատուիդ տէրը չե՞ս, ցեղիդ սրբազան լեզուէն օգտուվելու իրաւունք իսկ չունե՞ս, վաղու՞ց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղօղանջը չես լսում, առանց իտէալի եւ վեհութեան կը սողա՞ս միայն - ստրու՞կ ես՝ դու ես մեղաւոր, դու. ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է, եւ ուժեղը երախտիք չունի, որ ուժեղ է: Դու խաբուած ես ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնէական բարոյախոսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քող եւ դիմակ ուժեղների հոգու համար: Ուժն է ծնում իրաւունքը: Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատութիւնը եւ ամեն ինչ:

...

- Այս էր աշխարհը հայկական գողգոթայի հանդէպ: Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովուրդին, որը չէր ուզէր մեռնիլ, բայց չէր կարող եւ ապրել[1]:

Համեմատելով այս երկու հատվածները կարելի է նախ և առաջ նկատել, որ առաջին հատվածում բացակայում է «վսեմ» բառը և առանձնահատուկ կերպով Քրիստոսի խոսքը ներկայացվում է միայն որպես «վտանգավոր» երևույթ, ինչպես նաև խոսքերի «հեղինակների»

[1] Հատընտիր / Նժդեհ Գ., էջ 306 - 307:

տարբերությունն է ակնհայտ: «Հավատամք» գրքում լույս տեսած տողերը կարդալով այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այդ մտքերը Նժդեհի խոսքն է ուղղված հայ ժողովրդին, բայց համատեքստում կարդալով այդ հատվածը՝ պարզ տեսնում ենք, որ դա «հանցավոր ու անտարբեր մարդկության» պատասխանն է օգնություն կանչող «հավաքավառ խաչեցյալին», այսինքն՝ հայ ժողովրդին:

Սակայն պետք է նշենք, որ այս հատվածը տարբեր մեկնաբանություններ է ստացել: Օրինակ՝ Վ. Միրզոյանը այն կարծիքին է, որ Նժդեհն անուղղակի ձևով՝ օտարի շուրթերով է արձանագրում դառը ճշմարտությունը[1]: Իսկ ահա Ռ. Համբարձումյանը նշում է, որ այդ խոսքերը Նժդեհի համար միանշանակորեն անընդունելի են, քանի որ այդպես է ասում «հանցավոր ու անտարբեր» մարդկությունը[2]: Թերևս այս տեսակետի օգտին է խոսում այն հանգամանքը, որ մեջբերված հատվածի թե՛ սկզբում, թե՛ վերջում Նժդեհը նշում է, որ այդպես «կը պատասխանէր մարդկութիւնը»: Ա. Պետրոսյանն էլ անդրադառնալով այն փաստին, որ հոդվածում տեղ գտած հատվածը համատեքստից կտրված վիճակում է ներկայացվում՝ գրում է. «Արդյունքում «հանցագործ ու անտարբեր մարդկության» կարծիքը վերագրվել է Նժդեհին, որի համաձայն Նազովրեցին ... ցնորապաշտ է, իսկ նրա խոսքը՝ վտանգավոր»[3]:

Հաճախ երկրորդ մոտեցման կողմնակիցներն իրենց տեսակետը հիմնավորելու համար դիմում են լռության փաստարկին: Այսինքն՝ նրանք իրենց թեզիսը հիմնավորելու համար անտեսում, լռության են մատնում հակառակ փաստարկը, որով ցանկանում են ցույց տալ հակառակ փաստարկի թուլությունը: Բայց այս պարագայում միանշանակ պարզ է, որ նման մոտեցումն անտեղի է:

Եթե նույնիսկ ընդունենք Միրզոյանի տեսակետը և համաձայնենք երկրորդ մոտեցման ջատագովների հետ, ապա տրամաբանական հարց է առաջանում. ինչո՞ւ է Նժդեհն իր բազում աշխատություններում («Բաց նամակ հայ մտավորականությանը», «Ամերիկահայությունը, ցեղը և իր տականքը» և այլն) դրական է արտահայտվում Քրիստոսի և քրիստոնեության հասցեին: Նաև խնդրո առարկայի հետ կապված ճիշտ կլինի անդրադառնալ Նժդեհի կենսագրական բնույթի որոշ փաստերի. Նժդեհն իր ամբողջ կյանքի ընթացքում որևէ գործ չի սկսել՝ առանց Աստծո անունը տալու, նույնիսկ իր զենքը և սպարապետական գոտին օծել է տվել եկեղեցում: Նա իր բոլոր ռազմական գործողությունները

[1] Միրզոյան Վ., Նժդեհի դավանանքի բնույթի շուրջ, «Դարձ», 2002, փետրվար, թիվ 29, էջ 40:

[2] Համբարձումյան Ռ., Գարեգին Նժդեհ, Երևան, 2003, էջ 42:

[3] Պետրոսյան Ա., Գարեգին Նժդեհը եւ քրիստոնեութիւնը, Երևան, 2001, էջ 15-16

սկսել է եկեղեցուց կամ էլ աղոթքով[1]:

Եթե մանրամասնորեն ուսումնասիրենք Նժդեհի գրական ժառանգությունը, ապա պարզ կտեսնենք, որ նա ոչ թե հակաքրիստոնյա է, այլ ավելի շուտ հակաեկեղեցական: Նա գրում է. «Դա (Եկեղեցին - Դ. Հ.) վերագնահատումի պետք է ենթարկի քրիստոնեական իր սխալ ըմբռնումը, որպեսզի դադարի թուլությունն առաքինություն համարել և սպանել մեր ժողովուրդի կամքը: Սխալ է ըմբռնել դա քրիստոնեական սիրո խորհուրդը և դրա հետևանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգության: Սխալվել, չարաչար սխալվել է մեր Եկեղեցին՝ «տնանկների» և «սնանկների» բարոյականություն քարոզելով: Սրանից հետո սիրո և զոհաբերության ընդունակ արի ժողովուրդի մասին պիտի խոսի, եթե ուզում է, որ քրիստոնեության հետքերը մնան Փոքր Ասիայում և Հայաստանում»[2]:

Նժդեհը, փաստորեն, մերժում է սիրո այնպիսի դրսևորումը, որը տանում է կործանման, հնազանդության, թուլության և զրկում թշնամու դեմ կռվելու, ինքնապաշտպանվելու հնարավորությունից, ինչպես նաև քննադատում է Հայ Եկեղեցուն, որը, նրա կարծիքով, հենց այդպիսի սեր է քարոզել՝ սխալ հասկանալով քրիստոնեական սիրո խորհուրդը: Նա նաև չի ընդունում թույլ մարդու սերը. նրա կարծիքով սիրում է նա, ով ուժեղ է. «Արգասաւոր չէ թոյլի սերը: Քծնանք է թոյլի ներումը: Անընդունակ է թոյլը ինչպես սիրոյ, նոյնպես եւ զոհաբերութեան»[3]:

Միանգամայն ընդունելի է Նժդեհյան սիրո գաղափարը, որը չի հակասում նաև քրիստոնեական սիրո գաղափարին[4], բայց արդարության առջև չմեղանչելու համար տեղին կլինի նշել, որ Նժդեհի այն կարծիքը, թե Հայ Եկեղեցին իբր «տնանկների» և «սնանկների» բարոյականություն է քարոզել, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Հասկանալի է, որ Նժդեհն այս խոսքերն ասել է՝ ազդված լինելով Նիցշեի նմանատիպ գաղափարներից (վերջինս ծնվել և մեծացել է բողոքական ընտանիքում և հետևաբար քրիստոնեությունն ընկալել է բողոքականության տեսանկյունից, որը նրա ապրած ժամանակաշրջանում իրոք գտնվում էր «անկումային» շրջանում՝ «քարոզելով» քրիստոնեության ոգուն ոչ հարիր գաղափարներ), բայց նա հավանաբար մի պահ աչքաթող է արել այն կարևոր հանգամանքը, որ Եկեղեցին միշտ էլ գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի մղած գոյամարտերին և շատ հաճախ էլ հենց ինքը՝ Եկեղեցին, է ստանձնել առաջամարտիկի

[1] Համբարձումյան Ռ., Վարք Նժդեհի, Երևան, 2001, էջ 105:
[2] Գարեգին Ն., Երկեր, էջ 125:
[3] Հատընտիր / Նժդեհ Գ., էջ 69:
[4] «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին» Աստվածաշնչյան խոսքը (Մատթ. Ե:44) պետք է հասկանանք այն կտրվածքով, որ անհրաժեշտ է ուժեղ լինել թշնամիներից, որպեսզի կարողանանք սիրել նրանց:

գործառույթները: Այդ ամենը մենք պարզ տեսնում ենք Վարդանանքից սկսած մինչև Նժդեհի ապրած օրերը՝ մինչև Սարդարապատի հերոսամարտը (ինչպես նաև մեր ապրած ժամանակաշրջանում):

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք Նժդեհի գրական ժառանգության վերաբերյալ ուսումնասիրությունը, պիտի նշենք, որ նա, եթե անգամ քրիստոնյա չի եղել, ապա առավել ևս չի եղել հակաքրիստոնյա: Նժդեհը, լինելով համադրական (կոմպլեկտային) մտածող, փորձել է քրիստոնեական և հեթանոսական կրոններից դուրս բերել և մեկ գաղափարախոսության ներքո միացնել ու տարածել այն, ի՛նչը կենսական նշանակություն ուներ հայ ժողովրդի համար տվյալ ժամանակաշրջանում, ի՛նչը կփրկեր հայ ժողովրդին վերահաս կործանումից. այն է՝ միասնություն, քաջություն, ինքնազոհաբերման պատրաստակամություն, ուժեղի և հաղթողի հոգեբանություն: Թերևս ճիշտ է, Ս. Զաքարյանի այն տեսակետը, որ Նժդեհը նման է մեղվի, ով նույնիսկ իրար հակադիր ուսմունքների մեջ կարողանում էր տեսնել մարդկային ոգու, ստեղծագործ ուժի լավագույն դրսևորումները՝ հավաքելով դրանցից իրեն անհրաժեշտ նեկտարը[1]:

Annotation

In literature of Garegin Njdeh one can notice that if he wasn't a Christian, so he wasn't also Antichristian. He tried to create a new ideology in synthesis of Christianity and Pagan, which was very important in saving of Armenian nation.

Аннотация

Познакомившись с литературным наследствием Гарегина Нжде, то можно увидеть, что если он не был христианунам, то и не антихристианинам. Он попробовал создать в синтезе христианства и язычевства новую идеологию, которая была очень важна для сохранении армян.

[1] Տե՛ս Զաքարյան Ս., Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար), Երևան, 2001, էջ 10: